Հաստատում եմ
«Ադամյան դպրոցի» տնօրեն՝ Լ. Ադամյան
14.06.2023թ.

«Ադամյան դպրոցի»
«Էկո ակումբ» խմբակի ծրագիր
Միջին և ավագ դպրոց /6-12-րդ դասարան/
Շաբաթական 2 ժամ, տարեկան 72 ժամ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Էկոլոգիան բնության էկոնոմիկայի ճանաչումն է, կենդանի օրգանիզմների և շրջակա միջավայրի օրգանական և անօրգանական բաղադրիչների միջև բոլոր տեսակի փոխհարաբերությունների միաժամանակյա հետազոտությունն է, էկոլոգիան գիտություն է, որն ուսումնասիրում է բնության մեջ գոյություն ունեցող բոլոր բարդ փոխադարձ կապերը, որոնք Դարվինի կողմից դիտարկվել են որպես գոյության պայքարի պայմաններ:

Բնապահպանական գիտելիքները սովորողների կրթական մշակույթի անբաժան մասն են կազմում: Էկոլոգիական դաստիարակության ռազմավարական խնդիրներից է սովորողների մոտ այն գիտակցական ընկալման ձևավորումը, էկոլոգիական դաստիարակությունը, էկոլոգիական մշակույթի արմատավորմունը, շրջակա միջավայրի պահպանության, բնօգտագործման և էկոլոգիական անվտանգության բնագավառում անձի ճիշտ և խելամիտ կողմնորոշմանը և որ ամենակարևորն է բնապահպանական խնդիրների լուծման բանալին իրենց ձեռքում է, բնապահպանական խնդիրները լուծելի են, երբ բնապահպանական վարքագիծը կիրառվում է առօրյա կյանքում:

Սույն խմբակի ծրագիրը կազմվել է՝ նպաստելու սովորողների էկոլոգիական համալիր գիտելիքների ձևավորմանը՝ որպես մարդու էկոլոգիական մշակույթի և կենսակերպի բաղադրիչ՝ սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության իրականացումը, շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական վերաբերմունքի մակարդակի բարձրացմանը, որը հնարավորություն է տալիս սովորոեղներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ, ձևավորել հմտություններ և բացահայտել ունակություններ, դրսևորել բարոյական չափանիշներ և վարքագիծ՝ բնության հետ փոխներգործության ընթացքում. էկոլոգիական մշակույթի ձևավորումն իրագործելով «ԷԿՈ ԱԿՈՒՄԲ» խմբակի միջոցով՝ սովորողների նախասիրությունների շրջանակներում մեկտեղելով կանաչ հմտությունների և ստեղծագործական մտածողության զարգացումը:

Ծրագրի հիմքում ընկած է էկոլոգիական հումանիզմը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն խմբակի ծրագրի հիմքում ընկած է սովորողների մոտ «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքով սահմանված էկոլոգիական կրթության, դաստիարակության և մշակույթի ձևավորումը, ստեղծագործական մտածողության զարգացումը, առօրյայում կիրառելի իրերի ինքնուրույն ստեղծումը:

Էկո ակումբ խմբակի գործունեության նպատակն է

- Սովորողների կանաչ հմտությունների զարգացումը
- Պատասխանատու և նախաձեռնող քաղաքացու ձևավորումը
- Սովորողների ստեղծագործական մտածողության զարգացումը
- Ձեռքի աշխատանքի արժևորումը
- Ձեռնարկատիրական գործունեության համար նախադրյալների ստեղծումը

Ծրագրի խնդիրներն են՝

- Ձևավորել բնության նկատմամբ սիրո, հոգատար և խնայողական վերաբերմունք
- Զարգացնել սովորողների կանաչ հմտությունները
- Զարգացնել սովորողների ստեղծագործական մտածողությունը
- Ձևավորել գեղագիտական ճաշակ
- Զարգացնել թափոները տեսակավորելու գիտելիքներ և հմտություններ
- Տարբերակել ստեղծագործական ամենատարբեր, յուրատեսակ աշխատանքների համար առաջին հայացքից ոչ պիտանի տարբեր նյութերի հատկությունները, տեսակավորել՝ ըստ այդ հատկությունների, արժևորել և դրանց հատկություններին համապատասխան օգտագործել, երկրորդ կյանք տալ թափոններին
- Դաստիարակել սեր հայրենի բնության նկատմամբ
- Զարգացնել սովորողների երևակայությունը, պատկերավոր և ստեղծագործական մտածողությունը
- Աշակերտների մեջ ինքնուրույն գեղարվեստական, դեկորատիվ արվեստի արժեքներ ստեղծելու կարողությունների, հմտությունները զարգացնելով՝ պատրաստել դեկորատիվ իրեր՝ կանաչ հմտությունների և նորը ստեղծելու հմտությունների զուգորդմամբ
- Նախադրյալներ ստեղծել ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Էկո ակումբ» խմբակը նախատեսված է միջին և ավագ դպրոցի 6-12-րդ դասարանների աշակերտների համար, շաբաթական 2 դասաժամ, տարեկան՝ 72 ժամ:

Թեմա՝ Էկոլոգիական մտածողություն (10ժամ)	
Նպատակ՝	❖ Սովորողների բնապահպանական հմտությունների զարգացումը ❖ Պատասխանատու և նախաձեռնող քաղաքացու ձևավորումը ❖ բնության նկատմամբ սիրո, հոգատար և խնայողական վերաբերմունք ձևավորում
Վերջնարդյունք՝	❖ Սովորողը հանդես կգա՝ որպես շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար և խնայողական վերաբերմունք ունեցող ստեղծագործ,ակտիվ, նախաձեռնող քաղաքացի
Թեմա՝ Թափոններ. տեսակավորում (20ժամ)	
Նպատակ՝	❖ Սովորողների ստեղծագործական մտածողության զարգացումը ❖ Ձեռքի աշխատանքի արժևորումը ❖ Թափոները տեսակավորելու գիտելիքների և հմտությունների զարգացում
Վերջնարդյունք՝	Սովորողը կիմանա՝ ❖ Ինչ են թափոնները, ինչպես են դրանք առաջանում ❖ Ինչպես կառավարել թափոնները ❖ Ինչպես դրանցից նոր արժեք ստանալ ❖ Ինչպես կազմակերպել սակավաթափոն կենցաղավարություն ❖ Ինչպես տարածել կանաչ մտածողությունը ❖ Կկարողանա տեսակավորել և առանձնացված կերպով հավաքել թափոնները տարբերակել թափոնները՝ ըստ հատկությունների և դրանց երկորդ կյանք տալ
Թեմա՝ Կլիմայական փոփոխությունները, դրանց պատճառները(10ժամ)	
Նպատակ՝	❖ Ձևավորել գիտելիքներ կլիմայի փոփոխության պատճառների վերաբերյալ ❖ Ներկայացնել կլիմայական փոփոխությանը դիմակայելու միջոցառումները
Վերջնարդյունք՝	Սովորողը կիմանա ➢ Ինչ է կլիմայական փոփոխությունը ➢ Ինչպես դիմակայել կլիմայական փոփոխություններին ➢ Ինչպես խնայել, նաև հնարավորինս վերականգնել բնական պաշարները
Թեմա՝ Կանաչապատում (10ժամ)	

Նպատակ՝	❖ Սովորողների էկոլոգիական հմտությունների ձևավորում ❖ Զարգացնել սովորողների ստեղծագործական մտածողությունը ❖ Ձևավորել գեղագիտական ճաշակ ❖ Դաստիարակել սեր հայրենի բնության նկատմամբ
Վերջնարդյունք՝	Սովորողը կկարողանա ➢ Խնայել, նաև հնարավորինս վերականգնել բնական պաշարները ➢ Ձևավորել կապը ավագ և կրտսեր դպրոցական ընկերների հետ ➢ Կզարգացնի հողագործական որոշակի կարողություններ, հմտություններ ➢ Արդյունավետ տնօրինել դպրոցի անմշակ հողատարածքը
Շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրները(10ժամ)	
Նպատակ՝	❖ Շրջակա միջավայրի բնական վիճակի պահպանումը, վերականգնումը, վնասազերծումը, բնական պաշարների խելամիտ օգտագործման գիտելիքների զարգացումը ❖ Շրջակա միջավայրի վրա ֆիզիկաքիմիական, կենսաբանական և այլ վնասակար ազդեցությունների նվազեցման ու կանխման հմտությունների ձևավորում: ❖
Վերջնարդյունք՝	❖ Սովորողը կարողանա վերլուծի մարդկային գործունեության բացասական ազդեցությունը բնության վրա և ներկայացնի առաջարկներ այդ ազդեցությունը սահմանափակելու համար:
Գործնական աշխատանքներ(12ժամ) /Էկո պայուսակների պատրաստում և նկարազարդում, արտթերապիա, թափոններից զարդարանքի պատրաստում, կոմպոստի ստեղծում և այլն/	

Խմբակի ղեկավար՝ Ս. Սաքանյան